

Արձանագրություն թիվ 9

ԵՊՀ-ի Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի,

կայացած 2021թ հունիսի 28-ին

Օրակարգը՝

1. Ֆակուլտետի ՈւԳԸ նախագահի հաղորդումը կատարված աշխատանքների վերաբերյալ:
2. Ավարտական աշխատանքների պաշտպանությունների արդյունքների քննարկում:
3. Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչի հաշվետվությունը 2020-21 ուս. տարում կատարած աշխատանքների վերաբերյալ:
4. «Դասախոսը ուսանողի աչքերով» սոցիոլոգիական հարցումների արդյունքների քննարկում:
5. Ուսումնական ծանրաբեռնվածությունների հաստատում:
6. Ընթացիկ հարցեր::

1.Խորհրդի նախագահ Ս. Վ. Ղոչիկյան. Խորհրդի 16 անդամներից ներկա են 16-ը:

- Ներկայացնեմ մեր օրակարգը: Այս նիստում չի քննարկվելու «Դասախոսը ուսանողի աչքերով» սոցիոլոգիական հարցումների արդյունքները, քանզի դեռևս չենք ստացել այդ տվյալները: Այս հարցը կքննարկենք մյուս ուսումնական տարվա առաջին նիստում: Անցնեք հաջորդ հարցին՝ լսենք ՈՒԳԸ-ի նախագահ Ս.Եգանյանի հաշվետվությունը 2020-2021 ուս. տարում կատարած աշխատանքների մասին:

Ս.Եգանյան (հաշվետվությունը ամբողջությամբ կցվում է)

**2020-2021 ուսումնական տարում Քիմիայի ֆակուլտետի Ուսանողական Գիտական Ընկրության (ՈւԳԸ) կատարված աշխատանքների հաշվետվություն**

Չնայած 2020-2021թ.-ին Հայաստանում տիրող իրավիճակին, կապված «Կորոնա» վիրուսային համաճարակով և պատերազմով Քիմիայի ֆակուլտետի ՈւԳԸ-ն շարունակել է իր գործունեությունը: Այնուամենայնիվ վերնշված իրադարձությունները ունեցել են զգալի ազդեցություն կառույցի կատարած միջոցառումների քանակի վրա:

Ընթացիկ տարվա գործունեության մանրամասները բերված են ստորև.

1. Ֆակուլտետի ՈւԳԸ-ն համալրվել է 9 նոր անդամներով և 6 կամավորներով: Անդամների մի մասը արդեն իսկ ընդգրկվել են ֆակուլտետում առկա հետազոտական խմբերում:
2. Իրականացվել է 4 դասախոսություն, որից երեքը հեռավար ֆորմատով: Մասնակիցների խնդրանքով, և բանախոսների համաձայնությամբ դասախոսություններից որոշները տեսաձայնագրվել են և հասանելի են ԵՊՀ պաշտոնական կայքում, ինչպես նաև Քիմիայի ֆակուլտետի նորաբաց «YouTube»-յան էջում: Դասախոսությունների մասին ինֆորմացիան բերված է հետևյալ աղյուսակում.

Բանախոս	Դասախոսության թեման
«Huawei» ընկերության աշխատակից Հայկ Խաչատրյան	Նորագույն տեխնոլոգիաները և աշխարհը: Ինչպես կփոխվի կյանքը մոտ ապագայում
ԱՄՆ-ի «Տեխասի Ռիո Գրանդե Վալլի» համալսարանի դասախոս Միխիթար Հոբոսյան	Նանոէներգետիկ նյութեր
ԱՄՆ-ի «Նոտր Դամ» համալսարանի դասախոս Խաչատուր Մանուկյան	Արվեստի գործերի և մշակութային ժառանգության իրերի գիտական հետազոտություն
ԵՊՀ Քիմիայի ֆակուլտետի ավագ գիտաշխատող Սերգեյ Հայրապետյան	Սորբենտների տեսակները եվ հատկությունները

3. Կազմակերպվել է այցելություն «Կոկա-Կոլա ՀԲՔԱ» ըմպելիքների գործարան, որտեղ ուսանողները ծանոթացել են «Կոկա-Կոլա» բրենդի Հայաստանում առկա արտադրանքների տեսականու, և դրանց շշալցման պոռցեսի հետ, ինչպես նաև քննարկվել է հնարավոր հետագա համագործակցությունը:

4. Քիմիայի ֆակուլտետի ՈւԳԸ-ն ապահովել է ԵՊՀ-ում անցկացվող 2021թ.-ի քիմիայի դպրոցական օլիմպիադայի հանրապետական փուլի փորձնական մասը կամավորներով:

Ընդհանուր առմամբ Քիմիայի ֆակուլտետի Ուսանողական Գիտական Ընկերություն այս դժվար ժամանակահատվածում պատշաճ կերպով կատարել է ՈւԳԸ կանոնադրությունում նշված բոլոր գործառույթները: Քիմիայի ֆակուլտետի ՈւԳԸ նախագահ Տ. Եզանյան

Ելույթ ունեցողին հարցեր ուղղեցին պրոֆեսորներ՝ Տ.Վ.Ղոչիկյանը, Կ.Ռ.Գրիգորյան, Հ.Գ.Խաչատրյանը, դոցենտներ Ա.Ի.Մարտիրոսյանը, Ռ.Պ.Մխիթարյանը:

Քննարկման թեման ՈւԳԸ-ի կողմից կազմակերպվող ամենամյա կոնֆերանս էր, որն այս տարի պայմանավորված սահմանափակումների հետ տեղի չունեցավ:

Տ.Եզանյանը նշեց, որ հետագայում էլ խնդիրներ են առաջանալու կոնֆերանսների կազմակերպման գործընթացում քանզի փոխվել է կոնֆերանսին ներկայացվող աշխատանքների պահանջները: Ըստ ՈւԳԸ հոդվածների ժողովածուի պահանջներին ներկայացվող աշխատանքը պետք է բավարարարի մոնոհոդվածի բոլոր պահանջների: Բնագիտական թևի համար նման պահանջները անիրական են, քանզի ուսանողն իվիճակի չէ ինքնուրույն առանց ղեկավարի իրականացնել նմանատիպ, ծավալուն աշխատանք: Սկզբնական պահանջներն ավելի հստակ էին և ճիշտ: Ուսանողը ներկայացնում էր իր աշխատանքը թեզիսի տեքստով, հանձնաժողովը ընտրում էր լավագույն աշխատանքները և միայն գրախոսելուց հետո՝ թույլ տալիս տպագրելու վերոհիշյալ աշխատանքը: Նմանատիպ մոտեցումը ուսանողին և մեծ փորձ էր տալիս, և մոտիվացիա գիտական ասպարեզում:

Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի նախագահ, պրոֆեսոր Տ.Վ.Ղոչիկյան

- Դուք պետք է այս հարցը քննարկենք ՈւԳԸ-ի նիստի ժամանակ, քննարկեք այն և ներկայացրեք արդյունքների մասին: Այս խնդիրը պետք է ստանա ճիշտ արձագանք:

Տ.Վ.Ղոչիկյան - օրակարգի հաջորդ հարցը՝ Ավարտական աշխատանքների պաշտպանությունների արդյունքների քննարկում: Ամբիոնի վարիչները այժմ ներկայացնեն պաշտպանությունների արդյունքները:

Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ն.Ա.Դուրգարյան

Օրգանական քիմիայի ամբիոնում իրականացվել են 28 ավարտական աշխատանք

ԲԱԺԻՆ	ԿՈՒՐՄ	ՈՒՍԱՆՈՂՆԵՐ	ՄԻԱՎՈՐՆԵՐ
Սննդի անվտանգություն	մագ.	2	20,19
Ֆարմացիա	մագիստր	4	11,14,16,20
Քիմիա	բակ	3	20
Կիրառական քիմիա	քիմիա	2	20
Ֆարմացիա	բակ 4	2	19
Ֆարմացիա	բակ. հեռակա	15	18(2), 16, 15,14, 13,12(5), 11(2), 10(2)

Կարծում եմ արդյունքները արդեն իսկ խոսում են ամբիոնում կատարվող աշխատանքների որակի մասին:

Տիգրիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Շ.Ա.Մարգարյան

- Մեր ամբիոնում ավարտական աշխատանքներ են իրականացրել Կիրառական քիմիա և Քիմիա բաժնի 6 ուսանող, նրանք ստացել են գերազանց գնահատական: Ֆարմացիայի ինստիտուտի հեռական բաժնի ուսանողները ստացել են լավ և բավարար գնահատականներ (10-16):

Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ, դոցենտ Ա.Բ.Մարտիրոսյան

-Նույն օրինաչափությունը նկատվում է նաև մեզ մոտ: Քիմիա բաժնի ուսանողները ստացել են գերազանց և լավ գնահատականներ: Ֆարմացիայի ինստիտուտից վարտական աշխատանքներ չունենք:

Յ, Նիստի նախագահ Տ.Վ.Ղուչիկյան

- Այսօր լսելու ենք անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ Ա.Բ.Մարտիրոսյանի հաշվետվությունը 2020-2021 ուս.տարում կատարած աշխատանքների վերաբերյալ

Հաշվետվությունը ներկայացրեց ամբիոնի վարիչ, դոցենտ Ա.Բ.Մարտիրոսյանը (Հաշվետվությունը կցվում է)

5, Նիստի նախագահ Տ.Վ.Ղոչիկյան

-Օրակարգի կարևոր հարցն է՝ ուսումնական ծանրաբեռնվածությունների հաստատումը: Քիմիայի ֆակուլտետի երկու ամբիոնները ներկայացրել են իրենց ծանրաբեռնվածությունները ուսումնական վարչություն և արդենիսկ ստացել են հաստատումը: Ծանրաբեռնվածությունը չի ներկայացրել օրգանական քիմիայի ամբիոնը: Ամբիոնի վարիչը նշեց, որ այդ խնդիրը պայմանավորված է մագիստրատուրայի հարցով: Քանզի ամբիոն դիմում են այս տարվա շրջանավարտներից 4 և մեկ ուսանող նախորդ տարվա ուսանողներից: Այժմ այդ ուսանողները դիմումները ներկայացրել են մագիստրատուրայի բաժին և կարող ենք այդ բաժնի ծանրաբեռնվածությունը ևս ընդգրկել 2021-2022 ուս.տարվա ուսումնական ծանրաբեռնվածությունների մեջ: Մինչև շաբաթվա վերջ հարցը կլուծվի:

Նիստի նախագահ,

քիմ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր

Տ.Վ.Ղոչիկյան

Նիստի քարտուղար

քիմ.գիտ.թեկնածու, դոցենտ

Մ.Ա.Սամվելյան